ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1956 Общественные науки

Ռ. Մկրտչյան

ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մինչև այժմ հայ լեզվաբանական գրականության մեջ գրեթե չի ուսումնասիրված և դրա հետևանքով դպրոցական (և ո՛չ միայն դպրոցական) քերականություններում բացակայում է բարդ ստորադասական նախադասության այն տեսակը, որի կառուցվածքում չկան ստորադասական շաղկապներ կամ հարաբերական բառեր։ Մինչդեռ ռուսական գիտական քերականությունը վաղուց ի վեր զբաղվում է այս հարցով և հասել է այն բանին, որ այժմ այս կարգի նախադասությունների մասին խոսվում է թե՛ դպրոցական և թե՛ գիտական քերականության ձեռնարկներում։

Մեր դպրոցներում այսպիսի անշաղկապ նախադասությունները կամ չեն վերլուծվում և կամ համարվում են բարդ համադասական նախադասություններ, որովհետև նորմատիվ քերականության մեջ անշաղկապ բարդ նախադասություններից միայն բարդ համադասական նախադասության մասին է խոսվում, մինչդեռ բարդ նախադասությունների վերլուծման ժամանակ անհրաժեշտ է կանգ առնել նաև անշաղկապ բարդ ստորադասական նախադասության վրա՝ որպես բարդ ստորադասական նախադասության մի առանձին տեսակի։

Ռուսական գիտական քերականության հետևողությամբ ուսումնասիրելով հայերենի բարդ նախադասությունը, գալիս ենք այն համոզման, որ մեր լեզվում ևս բավականաչափ գործածական են անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունները։

Այժմ փորձենք կանգ առնել հայերենում կիրառվող անհամազոր կազմով բարդ անշաղկապ նախադասություններից ամենագործածականների վրա՝ տալով նրանց տեսակներն ըստ նրանց արտահայտած իմաստի և միմյանց նկատմամբ ունեցած ներքին հարաբերության։

Պետք է նկատել, որ շաղկապների բացակայությունը հաճախ դժվարացնում է նախադասության տեսակը որոշելը։ Ուստի այս հարցում պետք է ցուցաբերել մեծ զգուշություն։

Քննարկվող տիպի նախադասությունների համար կապակցման շաղկապային ձևը, ինչպես նկատում է ակադ. Վ. Վ. Վինոգրադովը, ամենևին էլ պարտադիր չէ։ Ընդհակառակը, անշաղկապ նախադասություններն ունեն մի շարք առավելություններ՝ շաղկապավոր ձևերի նկատմամբ, ինչպես՝ կարճ և գեղեցիկ լինելը, մտքի դիպուկությունը և այլն։ Այս բանը նկատել են ռուսական մի շարք լեզվաբաններ, իսկ Լոմոնոսովն իր «Ճարտասանություն»[1] աշխատության մեջ մի ցայտուն համեմատությամբ ցույց է տվել անշաղկապ նախադասությունների առավելությունը։ Շաղկապները համեմատելով մեխերի և սոսնձի հետ, գալիս է հետևյալ եզրակացության. ինչպես որ ավելի լավ տեսք ունեն այն մեքենաները (машины), որոնց կառուցվածքում քիչ են մեխերն ու սո-

[1] *Տես Ломоносов*, Риторика, ч. III. гл. 5. § 325.

սինձը, այնպես էլ ավելի կարևոր և զեղեցիկ են այն խոսքերը (իմա՝ նախադասությունները), որոնց մեջ քիչ են շաղկապները։

Չունենալով շարահյուսական դրսևորման սովորական շաղկապային ձև, այս կարգի նախադասությունները, սակայն, ունեն կառուցվածքային այլ առանձնահատկություններ, որոնք արտահայտվում են «բարդ նախադասության մասերի շարադասությամբ, նրանց կազմի մեջ մտնող բառաձևերի փոխհարաբերությամբ, առոգանությամբ»[1]։

Անշաղկապ բարդ ստորադասական նախադասության որոշման ամենակարևոր պայմանը այդ բարդ նախադասության կազմի մեջ մտնող պարզ նախադասությունների իմաստային կախվածության առկայությունն է։

Այսպես օրինակ՝

ա) Կուզեք կոիվ տեսնեք, դնացեք աղքտի տուն[2]։

բ) Գնանք. լուսինն արդեն խոնարհվում է[3]։

գ) Ես չեմ կարող ապրել այլևս Տավուշում. այս դղյակն ինձ համար դարձել է դժոխք[4]։

դ) Ես չեմ հիշում՝ երբ և ո՞ւր
Հանդիպեցի քեզ, ու դու
Վրդովեցիր համբ ու լուռ
Հանգստությունն իմ հոգու...[5]

Առաջին նախադասության մեջ երկու պարզ նախադասություններից առաջինը երկրորդի հետ կապված է պայմանի հարաբերությամբ, երկրորդ և երրորդ նախադասություններում երկրորդ մասը ցույց է տալիս առաջինի պատճառը կամ հիմնավորումը, իսկ չորրորդ նախադասության մեջ ընդգծված մասը բացատրում, պարզաբանում է առաջին մասի իմաստը, նրա նկատմամբ կատարելով ուղիղ խնդրի դեր։

Անհամազոր մասերով անշաղկապ բարդ նախադասություններում դրսևորվում է դեպքերի և երևույթների փոխադարձ կախվածություն, որն արտահայտվում է նախորդող նախադասության պայմանավորվածությամբ հաջորդողով, հաջորդող նախադասության կախվածությամբ նախորդողից և նախորդողի բովանդակության բացահայտմամբ՝ հաջորդողի մեջ։ Ըստ այսմ անշաղկապ երկրորդական նախադասություն պարունակող բարդ ստորադասական նախադասությունները բաժանվում են երեք հիմնական խմբերի՝

1. Երկրորդական նախադասությամբ պայմանավորվածություն արտահայտող անշաղկապ բարդ ստորադասական նախադասություններ (պայմանի), օրինակ՝ «Կուզես ատամի ցավեն ազատվիս, արմատը արևին ցույց տուր»[6]։

2. Երկրորդ մասում պատճառ կամ հետևանք արտահայտող նախադասություններ, որոնք առաջին մասում արտահայտվող մտքի բացատրությունն են հանդիսանում։ Օրինակ՝ ա) Եվ այս բանը հորս հայտնել չկարողացա. լեզուս

---

[1] Грамматика русского языка (под редак. В. В. Виноградова), часть II, 1954 г., Москва, стр. 269.

[2] Ա. Դանիելյան, Հայկական առածանի, 1951, Երևան, էջ 5։

[3] Մուրացան, Գ. Մարդպետունի, հատ. 3-րդ, Երևան, 1952, էջ 313։

[4] Նույն տեղում, էջ 422։

[5] Վ. Տերյան, Բանաստեղծություններ, 1940, Երևան, էջ 138։

[6] Հայկական առածանի, էջ 50։

կարկամել էր ուրախությունից[1] (պատճառի). բ) Կածանը փշոտ ու քարքարոտ է, բոբիկ գնալ չի լինի[2] (հետևանքի)։

3. Երկրորդ մասում առաջին մասի բովանդակությունը բացահայտող նախադասություններ. օրինակ՝ ա) Ես չեմ հասկանում, ի՞նչ եմ անում[3] (խնդիր). բ) Չի հասկացվում՝ ընդո՞ւնում է իր սխալը (ենթակա)։

Այժմ անցնենք վերոհիշյալ տիպերի կոնկրետ քննարկմանը։

1. ՊԱՅՄԱՆԻ ԱՆՇԱՂԿԱՊ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսի նախադասությունների առաջին մասն արտահայտում է պայման, իսկ երկրորդը՝ այն գործողությունը, եղելությունը, որ թելադրում է այդ պայմանը։ Երկու մասերից առաջինը, որ է գլխավոր նախադասությունը, արտասանվում է տոնի բարձրացմամբ, որին հաջորդում է փոքր դադար, իսկ երկրորդ մասը՝ երկրորդական նախադասությունը արտասանվում է տոնի ցածրացմամբ։ Պայմանավորվածության նշանակությամբ անշաղկապ բարդ նախադասությունները կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի.

ա) Կոնկրետ պայմանավորվածություն արտահայտող նախադասություններ։

բ) Ընդհանրական պայմանավորվածություն արտահայտող նախադասություններ։

Ա. Կոնկրետ պայմանավորվածություն արտահայտող անշաղկապ նախադասություններում թե՛ առաջին և թե՛ երկրորդ մասերի գործողությունները կատարվում են կոնկրետ ժամանակներում՝ տվյալ պայմանի համապատասխան։ Այդ ժամանակները գերազանցապես ապառնի են, ըստ որում պայման ցույց տվող մասը սովորաբար արտահայտվում է ըղձական եղանակով, իսկ երկրորդ մասի ստորոգյալը՝ պայմանական եղանակով։ Այսպես օրինակ՝

1. Զլիներ Ցլիկ-Ամրամը, Գուգարքն ու Տայքը չէին բաժանվիլ հայոց թագավորից (Մուրացան, հատ. 3-րդ, էջ 416)։

2. Երեք մաներ ունենամ՝ կտանեմ հացի կտամ, կբերեմ կուտեք... (Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, 1953 թ., Երևան, էջ 91)։

3. Անուշ աղջիկ, երկինք լինիմ,

Դուն ի՞նչ կըլնիս (Ավ. Իսահակյան, Ընտիր երկեր, հատ. 1-ին, 1939 թ. Երևան, էջ 106)։

Կոնկրետ պայմանավորվածություն արտահայտող նախադասությունների երկրորդ մասում հաճախ կիրառվում են նաև հրամայական եղանակի ձևեր. օրինակ՝

1. Կոիվ ունես, իր հետ արա (Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, էջ 246)։

2. Կուզես ամեն օր եկ, կուզես բոլորովին մի՛ երևա (Ս. Խանզադյան, Հողը, առաջին մաս, էջ 458)։

Հանդիպում են նաև այլ եղանակներով ու ժամանակներով դրսևորված բայաձևեր, ինչպես և բաղադրյալ ստորոգյալներ. օրինակ՝

---

[1] Մուրացան, հատ. 3-րդ, էջ 80։

[2] Ս. Խանզադյան, Հողը, առաջին մաս, 1954, էջ 301։

[3] Նար-Դոս, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, 1916, Երևան, էջ 260։

1. Կարողացար ժամանակին մշակել, բան կստանաս (Ս. Խանզադյան, Հողը, առաջին մաս, էջ 209)։

2. Աչքդ թեքեցիր — բանիդ տերը չես (Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, էջ 160)։

3. Գրող չունի՝ գրողն եմ ես (Ն. տ., էջ 247)։

4. Փեշդ խվի գերեզմանիս՝

Փափագելի բախտ է ինձի (Ավ. Իսահակյան, Ընտիր երկեր, էջ 138)։

Բերված բոլոր օրինակներում բարդ ստորադասական նախադասության առաջին մասը, որ պայմանի անշաղկապ երկրորդական նախադասություն է, կարող ենք վերածել նույն տիպի շաղկապավոր նախադասության՝ սկզբից ավելացնելով եթե (որոշ դեպքերում նաև՝ թե, թե որ, որ) ստորադասական շաղկապները։ Այսպես օրինակ՝

Եթե չլիներ Ցլիկ-Ամրամը, Գուգարքն ու Տայքը չէին բաժանվիլ հայոց թագավորից։

Բ. Ընդհանրական պայմանավորվածություն արտահայտող անշաղկապ նախադասությունները կոնկրետ պայմանի նախադասություններից տարբերվում են նրանով, որ այս դեպքում մի գործողության կամ եղելության պայմանավորվածությունը մի այլ գործողությամբ ունի մշտական, ընդհանրական, տևական հնարավորության կամ անհրաժեշտության բնույթ։ Նախադասության ընդհանրական պայման արտահայտող մասը կոնկրետ պայման արտահայտող նախադասության համեմատությամբ արտասանվում է տոնի է՛լ ավելի բարձրացմամբ, իսկ երկու մասերի միջև եղած դադարը ավելի տևական է։

Այսպիսի նախադասություններում ևս ստորոգյալները մեծ մասամբ արտահայտվում են ըղձական-պայմանական եղանակի բայաձևերով։ Բավականաչափ գործածական են նաև սահմանական եղանակի անցյալ կատարյալ, ներկա, մասամբ վաղակատար և հրամայական եղանակի դրական ու ժխտական ձևերը։ Բաղադրյալ ստորոգյալներ քիչ են հանդիպում։ Քանի որ ընդհանրական պայմանավորվածության նշանակությամբ անշաղկապ նախադասություններն արտահայտում են գործողության մշտական, ընդհանրական գաղափար, այդ պատճառով պայմանի այս կարգի նախադասությունները գերազանցապես առածներ են, որոնք նույնպես ընդհանուր նշանակությամբ են գործածվում և մեծ մասամբ վերաբերում են անձերի։ Այսպես, օրինակ՝

1. Դեղ կանգնի, գերան կկոտրի[1] (էջ 12)։

2. Ժամանակը խեզ չի հարմարի, դու ժամանակին հարմարի (էջ 15)։

3. Որդի չունես, հոգի չունես (էջ 31)։

4. Սատանան գետնի տակին սխտոր ուտի, կիմանա (էջ 58)։

5. Լեզուն շրլնի, ագռավները աչքերը կհանեն (էջ 63)։

6. Ցորեն հաց չունես, ցորեն լեզու ունեցիր (էջ 88)։

7. Մեղրը սամուր խուրմ ըլնի, վրադ մի առնի (էջ 98)։

8. Երեխին բան խոստացար, պետք է կատարես (էջ 162)։

Պայմանի անշաղկապ բարդ նախադասությունները զգալի կիրառություն ունեն հայերենում։ Կոնկրետ պայմանի նախադասություններն ավելի գործածական են գրական խոսքում, մինչդեռ ընդհանրական պայման արտահայ-

---

[1] Այս և հաջորդ օրինակները վերցված են Ա. Ղանալանյանի «Հայկական առածանի» գրքից։

տողները հատուկ են խոսակցական լեզվին, թեև դրանց զգալի մասը ևս թափանցել է գրական լեզվի մեջ կամ իր նախնական ձևով և կամ այս կամ այն հեղինակի կողմից գրական մշակման ենթարկված։

2. ՊԱՏՃԱՌ-ՀԵՏԵՎԱՆՔԻ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անշաղկապ բարդ նախադասության այս տեսակը արտահայտում է պատճառի և հետևանքի հարաբերություն։ Այս տիպի նախադասությունների երկրորդ մասը կարող է արտահայտել հիմնավորում, պատճառ և կամ՝ հետևանք, արդյունք, եզրակացություն, հետևություն։ Ըստ արտահայտած այս իմաստների՝ պատճառ-հետևանքի նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝

ա) Երկրորդ մասում հիմնավորումը, պատճառը մատնանշող նախադասություններ (պատճառի).

բ) Երկրորդ մասում հետևանքը մատնանշող նախադասություններ (հետևանքի)։

Պատճառի անշաղկապ նախադասություններում առաջին մասն արտասանվում է յուրահատուկ «նախազգուշացնող» առոգանությամբ, տոնի «անհանգիստ» իջեցմամբ, իսկ երկրորդ մասից առաջ լինում է զգալի դադար։ Բարդ նախադասության երկրորդ մասը՝ պատճառի պարագա անշաղկապ երկրորդական նախադասությունը ցույց է տալիս առաջին մասում արտահայտված մտքի հիմնավորումը, պատճառը։ Օրինակ՝ «Անկարելի էր թագավորական ընտանիքը Դվինում պահել. հազարացի բռնավորները ամեն ժամանակ կարող էին հարձակվել այդ քաղաքի վրա (Մուրացան, հատ. 3, էջ 10)։

Պատճառի անշաղկապ նախադասություններն ունենում են երկու ենթատեսակ՝ 1. Բուն-բացատրական, 2. Հրամայական-բացատրական։

ա) Առաջին խմբի նախադասությունների երկրորդ մասը ցույց է տալիս առաջին մասում արտահայտված մտքի ռեալ պատճառը կամ հիմնավորումը։ Այսպիսի նախադասությունների երկու մասերում էլ ստորոգյալներն արտահայտվում են սահմանական, ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ձևերով։ Այսպես օրինակ՝

1. Իզուր է շտապելդ, տեր արքա, թշնամին չէ հառաջանում դեպի մեզ (Մուրացան, հատ. 3, էջ 183)։

2. Ոչ ոք ինձ չտեսավ. ես խուլ սանդուղքներից իջա (Ն. տ., էջ 250)։

3. Ձախ ձեռքով հաց չեն ուտի, փորը չի կշտանա («Հայկական առածանի», էջ 147)։

4. Հարկ չկա շտապելու. դեռևս վեց տարի է անցել (Նար-Դոս, հատ. 5, էջ 250)։

5. Ծառան տեղից անդամ չշարժվեց. ապուշ էր կտրել (Ն. տ., էջ 254)։

6. Քսան քայլից այն կողմ ոչինչ չէր երևում. ջրեղեն պատը ծածկում էր ամեն ինչ (Ս. Խանզադյան, Հողը, առաջին մաս, էջ 502)։

Պատճառի անշաղկապ նախադասությունները ճիշտ որոշելու համար, որպես օժանդակ միջոց, բարդ նախադասության առաջին մասից հետո անհրաժեշտ է տալ ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ պատճառով հարցերը[1]։ Եթե երկրորդ

[1] Պատճառի անշաղկապ նախադասությունները չպետք է շփոթել նպատակի պարագա անշաղկապ նախադասությունների հետ։ Երբեմն այս երկու տիպի նախադասություններին տրվող հարցերը դուպադիպում են. պետք է առաջնորդվել երկրորդական նախադասության արտահայտած իմաստով։

մասը հանդիսացավ սրանցից որևէ մեկի պատասխանը, ուրեմն երկրորդ մասը պատճառի անշաղկապ նախադասություն է։

բ) Հրամայական-բացատրական անշաղկապ բարդ նախադասությունների առաջին մասում ստորոգյալն արտահայտվում է հրամայական եղանակի բայաձևերով կամ հրաման արտահայտող այլ եղանակային ձևերով։ Նախադասության երկրորդ մասը, որն արտահայտում է առաջին մասում դրսևորվող բովանդակության պատճառը կամ հիմնավորումը, ունենում է սահմանական եղանակի ներկա, ապառնի, վաղակատար, մասամբ անցյալ կատարյալ և ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների ապառնի ժամանակներով արտահայտված ստորոգյալ. օրինակ՝

1. Բարձր կարդա. ես մի անգամ էլ եմ ուզում այդ խոսքերը լսել (Մուրացան, հատ. 3, էջ 130)։

2. Գնա՛նք. լուսինն արդեն խոնարհվում է (Ն. տ., էջ 313)։

3. Գտեք եղբորս. ուզում եմ տուն գնալ (Նար-Դոս, հատ. 5, էջ 215)։

4. Ջիուդ շտապեցրու, Գարեգին, վարար անձրև է գալու (Ս. Խանզադյան, Հողը, առաջին մաս, էջ 81)։

5. Քիչ կոնծի, կհարբես (Ն. տ., էջ 117)։

Հրամայական-բացատրական նախադասությունն ստանում է հակադրական-անջատական իմաստ, երբ երկրորդ մասում, որն արտահայտված է ապառնի ժամանակի բայաձևերով, ցույց է տրվում այնպիսի գործողություն, որն անպայմանորեն կկատարվի, եթե պահանջվող գործողությունը տեղի չունենա։ Այսպես՝

1. Ուշադիր արտագրիր, սխալներ կանես։

2. Ոտքերդ հագի՛ր, կմրսես, կհիվանդանաս։

3. Այս խաղողը կե՛ր, կզղջաս։

4. Բա՛ց արեք պատուհանները, հոտից կխեղդվենք։

Պատճառի անշաղկապ նախադասության մի ա՛ռանձին տեսակ պետք է համարել այնպիսիները, որոնց երկրորդ մասը բացատրական է՝ պատճառի իմաստային երանգով։ Այս դեպքում բարդ նախադասության առաջին մասը առոգանորեն և շարահյուսորեն ավարտուն միավոր է, իսկ երկրորդ մասը միանալով առաջինին՝ արտահայտում է լրացուցիչ հաղորդում՝ պատճառի իմաստային երանգով։ Նման նախադասությունների առաջին մասն արտասանվում է տոնի ընդհանուր իջեցմամբ, օրինակ՝

1. Սար ու ձոր — տերտերի փոր, տերտերի փոր — դրուստ մի հոր։ («Հայկական առածանի», էջ 153)։

2. Աթոռների նեղ միջանցքներից անցնելը կատարյալ պատիժ էր Վահանի համար. Բրտնակոխ եղած՝ նա հագիվ էր կարողանում անցկացնել իր ահագին փորը, ջարդելով նստածների ծնկները կամ ստիպելով նրանց վեր կենալ (Նար-Դոս, հատ. 5, էջ 192)։

3. Մահը աշխարհում ճիշտ նման է շան.

Որքան կծկվես՝ վրադ կհաչի (Գ. Սարյան, Բանաստեղծություններ, Երևան, 1954 թ. էջ 173)։

Բ. ՀԵՏԵՎԱՆՔԻ ԱՆՇԱՂԿԱՊ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետևանքի անշաղկապ նախադասությունների երկրորդ մասում դրսևորվում է առաջին մասում արտահայտված մտքի արդյունքը, հետևանքը, եզրակացությունը կամ հետևությունը։ Այդպիսի նախադասությունների առաջին մասն արտասանվում է սովորական պատմողական առոգանությամբ, իսկ երկու մասերի միջև եղած դադարն ավելի սևեռուն է, քան պատճառի անշաղկապ նախադասություններում. օրինակ՝

— Թագուհի՛, դու հուզված ես, դու պետք է հանգստանաս (Մուրացան, հատ. 3, էջ 299)։

Պատճառի և հետևանքի անշաղկապ նախադասություններում մեծ դեր է կատարում նախադասության անհամազոր մասերի շարադասությունը, քանի որ շարադասության փոփոխման հետևանքով առաջանում է նաև իմաստային փոփոխություն, որի պատճառով էլ փոխվում է անշաղկապ նախադասության տեսակը։ Ներքոհիշյալ նախադասությունները հետևանքի բարդ անշաղկապ նախադասություններ են.

ա) — Կսարսափես. չեմ կարող ասել (Մուրացան, հատ. 3, էջ 74)։

բ) Ժամանակը թանկ է, պետք է շտապել (Ն. տ., էջ 146)։

գ) Դու երկերեսանի մարդ ես. ես քո ոչ մի խոսքին չեմ հավատում (Ս. Խանզադյան, Հողը, առաջին մաս, էջ 262)։

Շրջելով վերոհիշյալ բարդ անշաղկապ նախադասությունների կազմի մեջ մտնող գլխավոր և երկրորդական նախադասությունների շարադասությունը, կստանանք պատճառի անշաղկապ նախադասություններ. այսպես՝

ա) Չեմ կարող ասել. կսարսափես։

բ) Պետք է շտապել, ժամանակը թանկ է։

գ) Ես քո ոչ մի խոսքին չեմ հավատում. դու երկերեսանի մարդ ես։

Հետևանքի անշաղկապ նախադասությունները ճիշտ որոշելու համար ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ պատճառով հարցերը պետք է տալ նախադասության երկրորդ մասից հետո. եթե առաջին մասը եղավ սրանցից որևէ մեկի պատասխանը, ուրեմն նախադասության երկրորդ մասը հետևանքի է։ Բերենք երկրորդ մասում հետևանքի անշաղկապ նախադասությունների օրինակներ։

1. Աքիլլեսը չկարողացավ տանել այդ նախատինքը. նա յուր սուրը պատյանի մեջ դրավ (Մուրացան, հատ. 3, էջ 169)։

2. Գառնին ամուր է և անառիկ. թշնամին նրան վնասել չի կարող (Ն. տ., էջ 288)։

3. Ես մեռնում եմ անզավակ. դու ես մնում պայազատ իմ բագի և գանի (Ն. տ., էջ 376)։

Ինչպես պատճառի, նույնպես և հետևանքի բարդ անշաղկապ նախադասությունները լայն կիրառում ունեն հայերենում։

Պատճառի և հետևանքի բարդ անշաղկապ նախադասությունների երկու մասերը միմյանցից բաժանվում են միջակետով, ստորակետով, բութով, գծիկով։

3. ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՑ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս տիպի անշաղկապ բարդ նախադասություններում երկրորդ մասը կարող է բացահայտել առաջին մասի բովանդակությունը, այսինքն պարզաբանել այն, ինչի մասին հաղորդվում է առաջին մասում։ Այսպիսի անշաղկապ նախադասությունների առաջին մասն արտասանվում է տոնի «անհանգիստ» հեցմամբ, երկրորդ մասից առաջ լինում է զգալի դադար, իսկ վերջում՝ տոնի սովորական իջեցում։

Ըստ երկու մասերի հարաբերության բնույթի՝ նման նախադասությունները բաժանվում են հետևյալ տեսակների՝

ա) Երկրորդ մասով առաջինի նկատմամբ խնդրի դեր կատարող նախադասություններ.

բ) Երկրորդ մասով առաջինի նկատմամբ ենթակայի դեր կատարող նախադասություններ.

գ) Երկրորդ մասով առաջինի նկատմամբ որոշչի դեր կատարող նախադասություններ.

դ) Երկրորդ մասով առաջինի նկատմամբ պարագայի դեր կատարող նախադասություններ։

Ա. Երկրորդ մասով առաջինի[1] նկատմամբ խնդրի դեր կատարող անշաղկապ բարդ նախադասություններում առաջին մասի ստորոգյալն արտահայտվում է, ասացական, իմացական, զգացական կամ հոգեկան վիճակ արտահայտող բայով. օրինակ՝ ասել, պատմել. հարցնել, հարցում անել, կրկնել, պատասխանել, բացատրել, պարզել, պատվիրել, կանչել, գիտենալ, կարծել, իմանալ, հասկանալ, տեսնել, հիշել, լսել, ուզենալ, ցանկալ, կռահել, մտածել, միտք անել, զգալ, խոստովանել, զարմացնել և այլն։ Այս և սրանց նման այլ բայեր պահանջում են ցույց տալ գործողության առարկան (օբյեկտը), որը հանդես է գալիս անշաղկապ նախադասության երկրորդ մասում որպես ընկալման առարկա, հոգեկան ներքին վիճակ, զգացմունքի նկարագրություն, խոսքի բովանդակություն և այլն։

Երկրորդ մասում խնդրի դեր կատարող անշաղկապ նախադասությունները հանդիսանում են նույնատեսակ շաղկապավոր նախադասությունների համանիշները։ Շատ հեղինակներ նույն բարդ ստորադասական նախադասությունը ոճական նպատակներով գործածում են թե՛ շաղկապով, թե՛ անշաղկապ։ Այսպես, օրինակ՝

ա) Ես չգիտեմ երբ և ինչպես եմ գրել այս նամակը (Ս. Խանզադյան, Հողը, առաջին մաս, էջ 348)։

բ) Կարծում ես մենակ դու է՞ (Նար-Դոս, հատ. 5, էջ 145)։

գ) Կարծում էի, թե աշխարհն իմս է (Նար-Դոս, հատ. 5, էջ 139)։

Երկրորդ մասում խնդրի դեր կատարող անշաղկապ բարդ նախադասությունների առաջին մասում հաճախ կարող է լինել խնդիր՝ արտահայտված դերանվամբ (օր. այս, էս, ինչ), սակայն դրանց բուն բովանդակությունը բա-

---

[1] Որոշ դեպքերում խնդրի դեր կատարող նախադասությունն ըստ շարադասության լինում է նախադաս կամ միջադաս. օր. ա) Թանս թթու է, բսող չկա (Հայկ. առածանի, էջ 80), բ) Ամեն մարդ՝ իմ ալուրս ճերմակ է, կասի (Ն. տ. էջ 87)։

ցահայտվում է երկրորդ մասում. օր.՝ ա) Բայց ինձ այս ասա տեսնեմ. ինչպի՞սի աղջիկ է (Նար-Դոս, հատ. 5, էջ 14)։

բ) Գնում եմ և ի՞նչ տեսնում. ուշաթափ ծննդաբերի գլխին տղամարդի մի ահագին փափախ... (Ն. տ., էջ 152)։

Բացատրական տիպի անշաղկապ նախադասություններից հատկապես առաջին մասի նկատմամբ խնդրի գեր կատարողները լայն գործածություն ունեն թե՛ պոեզիայում և արձակում, թե՛ բանավոր խոսակցական լեզվում և թե՛ բարբառներում։ Թվենք օրինակներ.

1. Այժմ պատմիր ինձ՝ ինչպես պատահեց այդ բանը (Նար-Դոս, հատ. 5, էջ 16)։

2. Այս գիշեր մոռացա հարցնեմ — քանի տարեկան է (Ն. տ., էջ 23)։

3. Միայն կրկնում եմ, այսպիսի բան երբե՛ք չեմ զգացել (Ն. տ., էջ 124)։

Երբ ուրիշի ուղղակի խոսքը գործածվում է հեղինակի խոսքի հետ, և ամբողջ նախադասությունն ունի երկանդամ պարզագույն կառուցվածք, նման անշաղկապ նախադասության կազմում ուղղակի խոսքը հեղինակի խոսքի համար դառնում է խնդիր՝ անկախ նախադասության մասերի շարադասությունից։ Օրինակ՝

1. «Ահա վերջապես մարմին առան իմ հույսերը»,— մտածում էի ինքս ինձ (Մուրացան, հատ. 3, էջ 85)։

2. — Ես ձեզ հետ կլինեմ մինչև իմ վերջին շունչը,— ասաց թագավորը (Ն. տ., էջ 338)։

3. Ամենքը միաբերան գոչեցին. «Կեցցե՛ թագավորը, կեցցե՛ թագուհին» (Ն. տ., էջ 84)։

Երկրորդ մասով առաջինի նկատմամբ խնդրի գեր կատարող անշաղկապ բարդ նախադասությունների երկու մասերը միմյանցից բաժանվում են բութով, ստորակետով, միջակետով, գծով[1], ստորակետ-գծով, իսկ երբեմն էլ ոչ մի կետ չի դրվում։ Վերջին դեպքում նախադասության երկու մասերն առոգանորեն ավելի սերտ են։

Բ. Երկրորդ մասով առաջինի նկատմամբ ենթակայի դեր կատարող նախադասությունների առաջին մասը լինում է անենթակա նախադասություն. այսպիսի նախադասության ստորոգյալն արտահայտվում է կամ միադիմի բայով (օրինակ՝ թվալ, պետք է, նշանակում է, պարզ է, երևում է, հայտնի է և այլն) և կա՛մ կրավորական բայով (որոշվել, զանազանվել, պարզվել, իմացվել և այլն)։ Առանձնապես տարածված են այնպիսի անենթակա նախադասությունները, որոնք ցույց են տալիս ընդհանուրին վերաբերող գործողություն։ Այդպիսի նախադասությունների ստորոգյալն արտահայտվում է ասել (ասում են, ասել են, ասել է) բայով։ Բերենք օրինակներ՝

1. Նշանակում է՝ ծանոթ չեք վիճաբանության ձայնագրությանը (Նար-Դոս, հատ. 5, էջ 252)։

2. Հայտնի չէր, որտեղից էր իմացել նա իր եղբորորդու հիվանդությունը (Ն. տ., էջ 291)։

3. Եվ բավական է՝ անարգ լծի տակ
Մենք ստրուկ մնանք՝ ձեռներս շղթա (Ավ. Իսահակյան, Ընտիր երկեր, էջ 214)։

[1] Նման դեպքերում երկու նախադասություններն իրարից գծով անջատելը այժմ ընդունված չէ։

4. Թվում է՝ լսում եմ ես քո շունչը,
Թվում է՝ ինձ մոտ ես դու էլի,
Թվում է՝ քո ամեն մի շշունչը
Իջնում է խաղաղ այս տողերին (Գ. Սարյան, Բանաստեղծ., էջ 64)։

5. Ասում են՝ ուռին աղջիկ էր ինձ պես (Հովհ. Թումանյան, Ընտ. երկ., էջ 187)։

Բացատրական տիպի այսպիսի նախադասությունների առաջին մասի ենթական կարող է արտահայտված լինել դերանվամբ կամ գոյականաբար գործածված ածականով, որի կոնկրետ բովանդակությունը պարզաբանվում է երկրորդ մասում. օրինակ՝

1. Պատահում է և այս. թշնամին առանց կռվելու անձնատուր է լինում։

2. Հնարավոր է նաև այդ. գիրք չունեցողները թող պարապեն կաբինետում։

3. Հետախույզներին սպասում էր ամենասարսափելին. թշնամին անասելի խոշտանգումների պիտի ենթարկեր նրանց։

Բացատրական տիպի անշաղկապ բարդ նախադասությունները, որոնց երկրորդ մասը առաջինի նկատմամբ ենթակայի գեր է կատարում, նույնատեսակ շաղկապավոր նախադասությունների համանիշներն են հանդիսանում։ Ոճական և այլ նպատակներով հաճախ հեղինակները գործածում են այս կարգի նախադասությունների թե՛ շաղկապավոր և թե՛ անշաղկապ տարբերակները։ Օրինակ՝

1. Երևում էր, որ ներս մտնողը բոլորին էլ սիրելի անձնավորություն էր (Մուրացան, հատ. 3, էջ 22)։

2. Ասում են, թե բախտն է ապրում (Ավ. Իսահակյան, Ընտիր երկեր, էջ 310)։

3. Բեշիրին այնպես թվաց, թե մի հսկայական զորություն սեղմել է յուր գրկում հագարացոց բանակը (Մուրացան, հատ. 3, էջ 330)։

4. Երևում է որևէ մեկը կասեցրել է (Ս. Խանզադյան, Հողը, առաջին մաս, էջ 281)։

5. Թվաց՝ նստել եմ մեր հին պարտեզում (Գ. Սարյան, Բանաստեղծ., էջ 2)։

6. Ինձ թվում է՝ Գրիշան էնքան էլ ջիգյարով չխփեց... («Ոգնի», 1955 թ., № 3)։

Վերևում թվարկած անշաղկապ նախադասությունները ևս կարելի է վերածել շաղկապավորների. օրինակ՝ Ասում են, թե ուռին աղջիկ էր ինձ պես, կամ՝ Ասում են, որ ուռին աղջիկ էր ինձ պես։

Գ. Երկրորդ մասով առաջին մասի որևէ անդամի (օր.՝ ենթակայի, հատկացուցչի, խնդրի, բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական վերադրի) նկատմամբ որոշչի դեր կատարող բարդ անշաղկապ նախադասությունների առաջին մասում որոշիչը երբեմն չի արտահայտվում, բայց հաճախ կարող է արտահայտված լինել, որը ձևական նշանակություն ունի, քանի որ նրա բուն բովանդակությունը տրվում է երկրորդ մասում. այսպես՝

1. Բայց նա պարապում էր և՛ ուրիշ գործերով, նավավարներից գնում էր Պարսկաստանից բերած չոր մրգեղեն, նարինջներ, շահով վաճառում էր մանր նպարավաճառներին (Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, 1951 թ., Երևան, էջ 26)։

2. Հանկարծ տեսա մի անսպասելի և անբացատրելի բան. Գասպարը լաց եղավ (Ն. տ., էջ 35)։

3. Մյուս կողմից, սակայն, Մուշեղ բերդակալն ու Գոռ իշխանիկը ծանր հոգսերի մեջ էին. պատրաստություններ էին տեսնում ապագա հարձակմանց դիմադրելու համար (Մուրացան, հատ. 3, էջ 243)։

4. Ճարմանալի գաղտնիքն իմանալուց հետո մի դժոխային կատաղություն եկավ վրաս. հրամայեցի շղթաներ զարկել իմ թշվառ ամուսնու ոտքերին (Ն. տ., էջ 417)։

5. Այդ պատվերը ամփոփում է յուր մեջ երկու բառ. «Սիրեցե՛ք միմյանց» (Ն. տ., էջ 479)։

6. Այդ օրվանից սկսեցի մշակել ինձ համար մի նոր աշխարհայացք. աշխարհիս երեսին ամեն բան թույլատրելի է, բացի սպանությունից (Նար-Դոս, հատ.5, էջ 75)։

7. Այդ կողմերի լեռնային պայմաններում լավ բերք տվող ուկրաինկան ուներ մի թերություն. հաճախ հնձից առաջ փչում էին տաք քամիները և արագացնում ցորենի հասունացումը (Ս. Խանզադյան, Հողը, առաջին մաս, էջ 179)։

8. Ներսում, իրոք, լուրջ հարց էին քննում, խնդիր էր դրված կրճատել օբյեկտների վարչատնտեսական ապարատը («Ոգնի», 1955 թ., № 2)։

9. Գիշերս գեշ երազ տեսա,

Տեսա սերս սուգի մեջ (Ավ. Իսահակյան, Ընտիր երկեր, հատ. 1, էջ 184)։

10. Բայց ո՞վ կըտա էն վայելքը՝

Ինքըս ինձ էլ չըզգայի (Հով. Թումանյան, Ընտիր, երկեր, էջ 77)։

Բերված օրինակներում որոշչին տրվող հարցերի միջոցով (ինչպիսի՞, ո՞ր, որքա՞ն) երկրորդական նախադասությունները բացահայտում են, թե ո՛րն է գլխավոր նախադասությունների մեջ ընդգծված ձևական որոշիչների ռեալ բովանդակությունը, այսինքն, ո՛րը կամ որո՛նք, ինչպիսի՛ն կամ ինչպիսի՛ք են անսպասելի և անբացատրելի բանը, ծանր հոգսերը, դժոխային կատաղությունը, երկու բառերը, նոր աշխարհայացքը, մի թերությունը, լուրջ հարցը, գեշ երազը, էն վայելքը։

Նման տիպի նախադասությունների առաջին մասում, ինչպես կարելի է տեսնել բերված օրինակներից ևս, որպես որոշիչ հաճախ հանդես է գալիս անորոշ դերանվան իմաստով գործածվող մի բառը, որը երբեմն էլ գործածվում է բան բառի հետ, որը ևս (բան բառը) կոնկրետ, ռեալ առարկա չի ցույց տալիս, օրինակ՝

Համենայն դեպս մի բան պարզ է, պետք է լրջորեն մտածել այդ նախագահի մասին (Ս. Խանզադյան, Հողը, առաջին մաս, էջ 415)։

Որոշ դեպքերում երկրորդ մասում որոշչի դերով հանդես եկող նախադասությունն սկսվում է բացատրական այն է կապակցությամբ, որին հետևում է բուն բացատրությունը. այսպես՝

Նա հոգաց նաև մյուս միջոցների մասին. այն է՝ փայտահարներ ղրկեց մոտակա անտառը (Ն. տ., էջ 335)։

Նման տիպի նախադասությունների երկրորդ մասի այն է կապակցությանը հաճախ հաջորդում է դերբայական դարձված, որի մասին հարկ չենք համարում այստեղ խոսել։

Ռ. Երկրորդ մասով առաջինի որևէ անդամի նկատմամբ պարադայի դեր կատարող անշաղկապ նախադասությունների երկրորդ մասում պարզաբանվում, կոնկրետացվում կամ ճշտվում է առաջին մասում արտահայտված պարագայական բառը կամ բառակապակցությունը. օրինակ՝

ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ

1. Ընկերները պայմանավորվեցին այսպես. յուրաքանչյուրը պետք է օգնի մյուսին առաջին առիթի դեպքում։

2. Սեղանի շուրջը նստած էին նահապետական սովորությամբ. կանայք մի կողմ, տղամարդիկ՝ մյուս կողմ (Ն. Զարյան, Հացավան, 1955 թ., Երևան, էջ 319)։

3. Շմավոնը պեպենոտ ձեռքով սղալեց մազերը և սկսեց այսպես.

— Առաջարկում եմ բաժակները հարյուր տոկոսով լցնել (Ն. տ., էջ 320)։

4. Նա սովորաբար հագնվում էր Հացավանի մյուս գեղջկուհիների նման. շրջազգեստը կոճկում էր մինչև բկի տակը և գլուխը, վիզն ու ծնոտը փաթաթում լայն ու թափանցիկ թաշկինակով (Ն. տ., էջ 296)։

5. Էնպես զարկեց՝ ուշքըս գնաց (Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, էջ 131)։

6. Նստեց անուշ երգեր ասավ՝ հին քամանչի մասը ձեռին։

Երկրորդ մասով առաջինի նկատմամբ ձևի պարագայի գեր կատարող անշաղկապ բարդ ստորադասական նախադասության մեջ գլխավոր նախադասությունից հետո տրվում է ինչպե՞ս հարցը։ Այս տիպի նախադասություններում շատ հաճախ գլխավոր նախադասության կազմում ձևի պարագան արտահայտվում է այսպես բառով։

ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ

1. Մըսրա թագավոր ղըրկել է տանի (Թումանյան, Ընտ. երկեր, էջ 236)։

2. Գոնե վարդերի փշերն ուղարկիր,—

Համբուրեմ, գրգվեմ սիրավառ սրտիս (Ավ. Իսահակյան, Ընտ. երկ., էջ 59)։

3. — Սիրո՛ւն տղա, գարուն կըլնիմ,

Քեզ զարդարեմ...

— Անո՛ւշ տըղա, սրև կըլնիմ,

Սիրտդ վառեմ (Ն. տ., էջ 106)։

Այս նախադասությունները կարելի է վերածել շաղկապավորների՝ երկրորդական նախադասությունից առաջ ավելացնելով համապատասխան շաղկապ (որ, որպեսզի)։ Այսպես, օրինակ՝ Գարուն կլինեմ, որ քեզ զարդարեմ։

Շատ դեպքերում կողք-կողքի՝ հանդես են գալիս թե՛ անշաղկապ, թե՛ շաղկապավոր նպատակի պարագա երկրորդական նախադասություններ. օրինակ՝

Հայաստանի հովերն եկան ձեզ ընդառաջ՝ համբուրեն,

Ծաղկոցների բույրերն եկան ճամփաներում ձեր բուրեն,

Թռան սրտերը մայրերի, որ փարվեն ձեզ, գուրգուրեն...

(Գ. Սարյան, Բանաստեղծություններ, 1954 թ., Երևան, էջ 182)։

Նպատակի պարագա անշաղկապ երկրորդական նախադասություններում ստորոգյալն արտահայտվում է ըղձ. եղանակի ձևերով։

Մենք, այսպիսով, կանգ առանք անհամազոր կազմով բարդ անշաղկապ նախադասությունների հիմնական տեսակների վրա, որոնք գործուն են հայերենում՝ հավակնություն չունենալով երբեք, թե այս հոդվածով սպառիչ խոսք կասենք այս կարգի նախադասությունների մասին։ Մեր աշխատանքն առաջին փորձն է այդ ուղղությամբ։